ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հոկտեմբերի 2025 թվականի №---Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի №86Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԻԶՈԴՐՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի հոկտեմբերի 1-ի գրությունը, ինչպես նաև «ԻԶՈԴՐՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0239 լիցենզիայի անհատական գործում առկա անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման №0064688 վկայականը, որում «Վարձակալության պայմանները» տողում գործողության ժամկետ նշված է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի մարտի 12-ի «ԻԶՈԴՐՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Յաղդան» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №86Ա որոշմամբ «ԻԶՈԴՐՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Յաղդան» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի

(հզորության) արտադրության №0239 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2029 թվականի հոկտեմբերի 21-ը, իսկ որոշման 1-ին կետում և 2-րդ կետով հաստատված հավելվածի 3-րդ կետում «մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2029 թվականի հոկտեմբերի 21-ը» բառերով,

2. «ԻԶՈԴՐՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել կառուցված կայանի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը հավաստող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները)՝ առնվազն մինչև 2029 թվականի հոկտեմբերի 21-ը ժամկետով:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի դեկտեմբերի 31-ից, բացառությամբ սույն որոշման 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում ընկերությանը իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
հոկտեմբերի 2025թ.